ուղղութեամբ՝ պիտի չարունակել աւելի մեծ եռանդով։ Որչափ եւ փոքր, նա արժէք ունի, յամենայն դէպս, հաշուի չառնուիլ չի կարող հակառակորդի կողմից։ Միայն թէ՝ նրան տալու է այն նշանակութիւնը, որ ունի իսկապէս, բայց ոչ երբեք՝ աւելին։ Վերջին հաշուով՝ ե՛ւ պարսիկը որպէս բարեկամ, ե՛ւ Թուրքը որպէս թշնամի՝ հաշուի առնել կարող են մեզ — մեր իրական, մեր սեփական ուժից դատելով։ Ինչ որ ասացինք հայ–պարսկական յարաբերութեան մասին, ըստ էութեան նոյնը վերաբերում է նաեւ հայ–քրդական մերձեցմանը։ Անցեալը ղեկավար դարձնելու չենք, ի հարկէ, մեր ներկայ եւ ապագայ քաղաքականութեան, բայց, նաեւ մոռնալու չենք նրա դասերը։

Պարսիկների եւ քրդերի օրինակը պարզ ցոյց է տալիս մեզ, որ նաեւ թուրքի վերաբերմամբ քարացած տեսակէտներով առաջնորդուելու չենք։ Հարիւր եւ աւելի տարիներ առաջ, երբ խօսք անդամ չկար տաճկահայ դատի մասին, արդէն իսկ գոյութիւն ունէր պարսկահայ դատ։ Հայկական–ազատագրական շարժումը նախ եւ առաջ պարսկահայ իրականութեան մէջ ծնունդ առաւ։ Հարիւր տարի առաջ՝ Պարսկաստանն էինք համարում հայը ու Հայաստանը ստրկացնողը։ Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն՝ կարդանք նորից։ Եւ սակայն, փոխուեցան ժամանակն ու պայմանները, փոխուեցան նաեւ յարաբերութիւնները։ Հարիւր տարի առաջ՝ մեր է՛ն մեծ թշնամին պարսիկն էր համարւում։ Թուրքի մասին չէր խօսւում։ Յիսուն տարի չանցած՝ պարսիկը արդէն դադարել էր մեզ թշնամի լինելուց եւ դարձել էր բարեկամ։ Թուրքն ու քիւրդն էին հայի արիւնախում թշնամիներ մնացել։ Եթէ կ'ուզէք՝ քիւրդը աւելի՛, քան՝ Թուրքը։ Հայկական Հարցը մինչեւ իսկ այդպէս ձեւակերպուեցաւ — պաշտպանութիւն ո՛չ թէ կամ ո՛չ այնչափ բէժիմի ու ճնշումների, այլ՝ քիւրդերի եւ չէրքէզների հալածանքների դէմ։ Այսօր քիւրդն էլ է դադարել մեր թշնամին համարուելուց եւ մնացել է միայն Թուրքը։ Եւ այսպէս ամէն անդամ, երբ մենք սրբուել ենք մէջտեղից ու թշնամութեան առարկայ չի մնացել։ Բայց մի կողմը այդ։ Ինչո՞ւ ենք կարծում, որ մի օր էլ հայ–տաճկական յարաբերութիւնները չեն փոխուիլ, գոնէ մեղմանալ։ Ո՛չ միայն հնարաւոր է այդ, այլ եւ, մեր խորին համոզումով, ցանկալի — հէնց մեր, հայկական շահերի տեսակէտից։ Դա պէտք է կատարուի, ի հարկէ, երկուստե՛ք։ Մենք ալ մեր բաժին պատրաստակամութիւնը հանդէս պիտի բերենք։ Գոնէ տեսականօրէն առայժմ մեր ուղեղներում։ Չեմ կարծում, որ դրանից բխելիք բարիքները մեր ժողովուրդի համար՝ պակաս լինին, քան ոմանց կարծիքով, սպասուող չարիքը։ Մոռնալու չէ, որ Անդրկովկասի սահմաններում իսկ՝ մենք նեղւում ենք, զրկւում մեր սեփական հողերից, որովհետեւ դիտւում ենք որպէս չեշտուած թշնամիներ Թրքութեան եւ Թուրքիայի։ Տեսանք, որ անդամ վրացիք օգտւում են մեր դարաւոր թշնամութիւնից։

Աւելի մանրամասնել չենք կարող։ Հայ քաղաքական ղեկավարութեան պարտականութիւնն է՝ որոնել եւ գտնել միջոցները, ձեռնթափ չլինել երբեք։ Մեր վերջնական համաձայնութիւնը ոչ միայն անդրկովկասեան, այլ եւ արտաքին հարեւանների հետ՝ պիտի դառնայ մեր գլխաւոր մտահոգութիւններից մէկը։ Հայաստանը դուրս պիտի բերել իր կղզիացած վիճակից։ Եւ դա պիտի անենք համաձայնութեան ճանապարհով, հեռու պահելով մեր երկիրն ու ժողովուրդը նորանոր ահաւոր վրտանգներից։ Պիտի անենք այդ՝ առաւելագոյն զոհաբերութեանց գնով իսկ։ Այդ չի նշանակում, ի հարկէ, թէ լքել պէտք է սեփական ուժերի կազմակերպումը եւ հաւաքումը։ Ըստ ինքեան հասկանալի խնդիրների մասին չեն խօսում։ Չեն խօսում մանաւանդ բարձրաձայն։ Բայց, խելքը գլխին մարդիկ չեն էլ դերագնահատում այդ ուժերի իրական արժէքը, ոչ էլ ստորագնահատում դիմացինի կարողութիւնը նոյն այդ մարդում։ Թէ ի՛նչ պատկեր է ներկայացնում իրական վիճակը նաեւ այդ կողմից, պարզ է ամէնքիս համար։ Այդ եւս ուրեմն պիտի հարկադրի մեզ, մէկի փոխարէն բազմաթիւ ուղիներ որոնելու։

* * *

Ամփոփենք եւ աւարտենք։

Պատմական դէպքերի բերումով հայութիւնը այսօր որպէս ազգային–քաղաքական միաւոր՝ անդրկովկասեան ժողովուրդ է դար-